**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի օգոստոսի 31-ի թիվ 3 որոշմամբ և
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն հրապարակվում է

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-02»**

**«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ի կարիքների **SARS-COV-2 վիրուսի ՌՆԹ-ի հայտնաբերման ՊՇՌ թեստերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-02»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2021թ. օգոստոսի 30-ին** ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ **2021թ. օգոստոսի 31-ին** տրամադրված պարզաբանումը՝

**Հարց 1**. DT Prime սարքավորման հետ կապված առկա են հետևյալ հարցերը.
1. Արդյոք սարքը ունի որևէ մոդել, թե սարքի պիտակի վրա գրված է միայն DT Prime
2. Եթե այո, ապա խնդրում ենք նշել սարքի մոդելը և արտադրողին, ինչը հնարավորություն կտա ինչպես մեզ, այնպես էլ այլ հնարավոր մասնակիցներին, առաջարկելու այնպիսի տեստեր, որոնք համատեղելի են նշված սարքավորման հետ:
Մեր կողմից համացանցում կատարված որոնման արդյունքում DT Prime անվամբ որևէ թասիկային սարքավորում չհայտնաբերվեց:

**Պարզաբանում 1**.
DT Prime մոդելն է, որը ունի 2 տարբերակ՝ 96 և 48, մեր լաբորատորիայում DT Prime-96-ն է: Արտադրողը Ռուսաստանի Դաշնությունն է:
Ինչ վերաբերում է համացանցում ձեր կողմից կատարված որոնումներին, առաջարկում ենք անցնել այս հղումով ևս՝ https://www.omnia-health.com/product/dtprime-real-time-detection-thermal-cycler:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-02»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Ս.Պապիկյանին**:

Հեռախոս՝ **012-80-80-83 (6014)**
Էլ. փոստ՝ **procurement@ncdc.am**